ՀՏԴ 159.9 *Հոգեբանություն*

ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Վ.Յարամիշյան

Անձի դիրքորոշումների համակարգը մշտապես եղել է հոգեբանական գիտության հետազոտական առաջնահերթ ուղղություններից մեկը՝ պատմականորեն արձանագրելով թե նվաճումներ, թե անկումներ: Այժմ գոնե հասկանալի է, որ դիրքորոշումը և սոցիալական դիրքորոշումը նույնական չեն: Դիրքորոշման բնորոշումը ձևակերպել է վրացական հոգեբանական դպրոցի հիմնադիր Դ.Ն.Ուզնաձեն (1)՝ որպես օբյեկտիվի և սուբյեկտիվի այնպիսի յուրօրինակ «սահման», որը կապակցում է հոգեկանը ֆիզիոլոգիականի հետ: Դիրքորոշումը նկարագրվում է որպես սուբյեկտի ամբողջական, չտարբերակված և անգիտակցական վիճակ, որը որպես հոգեկանի և ֆիզիկականի միջև միջնորդավորված օղակ՝ նախորդում է գործունեությանը, հնարավորություն տալով շրջանցել «անմիջականի» պոստուլատը: Դիրքորոշումն առաջ է գալիս պահանջմունքի և նրա բավարարման իրական հնարավորության բախման դեպքում:

Դիրքորոշումը մարդու վարքը կարգավորող հիմնական մեխանիզմներից է և որոշում է նրա ուղղվածությունն ու ընտրողական ակտիվությունը: Սակայն անձի բովանդակությունը (վարքը) չի հանգեցվում զուտ դիրքորոշման գործառույթի, այլ որոշվում է այնպիսի հիմնարար դրսևորումներով, ինչպիսիք են գիտակցությունը և օբյեկտիվացման ընդունակությունը: Անձի բնորոշ առանձնահատկություններից է նրա այնպիսի հեռահար շարժառիթավորումը (մոտիվացիան), որի նպատակը ապագային միտված պահանջմունքների բավարարումն է: Դիրքորոշումն արտահայտվում է ներկա ժամանակում, չնայած ուղղորդված է ապագային: Մարդու մտավոր, բարոյական, գեղագիտական բարձրագույն պահանջմունքները համապատասխանում են նրա «Ես-կոնցեպցիային»: Նրա վարքը կարող է դրսևորվել երկու մակարդակներում՝ իմպուլսիվ և գիտակցված: Առաջին դեպքում վարքի ուղղվածությունը որոշվում է այն դիրքորոշմամբ, որն առաջ է գալիս մարդու պահանջմունքների և այն իրադրության փոխգործակցության արդյունքում, որում դրանք ակտուալացվում են: Ավելի բարձր մակարդակում մարդը չի ենթարկվում իմպուլսին, այլ որոնում, գտնում է վարքի այնպիսի տիպ, որի համար կարող է պատասխանատվություն կրել: Այդ անելը հնարավոր է լինում օբյեկտիվացման մեխանիզմի շնորհիվ, որի համաձայն մարդն իրեն

---

[1] *Ուզնաձե Դմիտրի Նիկոլայի (1886-1950)-վրացի հոգեբան և փիլիսոփա, վրացական հոգեբանական դպրոցի և Թբիլիսիի համալսարանի հիմնադիրներից մեկը: Կրթությունն ստացել է Լեյպցիգում (1909թ.) և Խարկովում (1913թ.): «Ընդհանուր հոգեբանություն» (1940թ.) և «Դիրքորոշման հոգեբանության փորձարարական հիմքերը» (1949թ.) աշխատություններում մշակել է դիրքորոշման ընդհանուր հոգեբանական տեսությունը:*

հակադրում է շրջապատին, իրականությունն սկսում է ընկալել այնպես, ինչպես կա, և օբյեկտիվացնում է իր վարքը: Այսպիսով, մարդու վարքը պայմանավորող երկու հիմնական գործոն կա՝ 1.պահանջմունքը և 2.այն իրադրությունը, որում հնարավոր է բավարարել այդ պահանջմունքը, ամենից առաջ՝ դրա նկատմամբ ունեցած դիրքորոշումը:

Սոցիալական դիրքորոշումը որոշակի սոցիալական օբյեկտի նկատմամբ անձի այնպիսի հոգեբանական նախադիրք կամ նախակողմնորոշում (դիսպոզիցիա) է, որն արտահայտվում է օբյեկտի նկատմամբ առաջիկա գործողության եղանակի ընտրության մեջ: Սոցիալական դիրքորոշումը վեր է ածվում ակտիվ գործողության՝ դրդապատճառների ազդեցության տակ՝ ներառելով դրանց ճանաչողական (օբյեկտի ճանաչումը), աֆեկտիվ (օբյեկտի հուզական գնահատումը) և վարքային (օբյեկտի նկատմամբ դրսևորած վարքը) կողմերը (1):

Ի տարբերություն դիրքորոշման, սոցիալական դիրքորոշումն արտահայտվում է մարդու մտքերում, հույզերում, վարքում՝ անձին հաղորդելով երևույթները որոշակի ձևով ընկալելու և որոշակի ձևով գործելու ներքին հակվածություն: Սոցիալական դիրքորոշման հուզական, ճանաչո-ղական և վարքային բաղադրիչները սերտորեն փոխկապակցված են և կազմում են միասնական համակարգ: Անձի սոցիալական դիրքորոշումների համակարգի մեկ բաղադրիչի փոփոխությունը հանգեցնում է մյուսների փոփոխության: Սոցիալական օբյեկտի նկատմամբ վարքը որոշելիս մենք ավելի շատ առաջնորդվում ենք սոցիալական դիրքորոշմամբ, որը ձևավորվել է տվյալ օբյեկտի նկատմամբ, քան հենվում ենք նրա վերաբերյալ լրացուցիչ փաստեր ու տեղեկություններ հավաքելու և վերլուծելու վրա: Հետաքրքիր է, որ դիրքորոշումներում և համոզմունքներում առաջ եկող փոփոխությունները կարող են անմիջական ազդեցություն չունենալ վարքի փոփոխման վրա, սակայն դրանց շնորհիվ մարդն ավելի ընկալունակ է դառնում սոցիալական ազդեցության հաջորդ իրադրություններում(2):

Սոցիալական դիրքորոշումը հոգեկանի կարծրացած գոյացություն չէ, այլ դինամիկ է և տարբեր գործոնների ազդեցության տակ կարող է փոփոխվել: Սոցիալական դիրքորոշումների փոփոխությունները մշտապես հետաքրքրել է հետազոտողներին, որոնք փորձել են գտնել այն օրինաչափությունները, որոնք որոշում են այդ փոփոխությունների սահմանները: Պետք է նշել, որ անձի սոցիալական դիրքորոշման հիմնախնդրի հետազոտումը այժմ էլ սոցիալական հոգեբանության համար կարևոր նշանակություն ունի: Եթե առհասարակ սոցիալականացումը բացատրում է, թե ինչ եղանակներով է անձը յուրացնում, ներքնայնացնում և հետագայում վերարտադրում հասարակական փորձը, ապա սոցիալական դրքորոշման ձևավորումը պատասխանում է այն հարցին, թե ինչպե՞ս է այդ սոցիալական փորձը ներքնայնացվել անձի կողմից և ինչպե՞ս է իրեն դրսևորում՝ անձի կոնկրետ գործողություններում և վարքում: Միայն այս

[1] *http://www.glossary.ru/cgi-bin/gl_sch2.cgi?RRu.ogr;t:1!zxygtuiqo*
[2] *Зимбардо Ф., Ляйппе М., Социальное влияние, СПб, 2001.*

մեխանիզմի հետազոտումը թույլ կտա լուծել այն խնդիրը, թե միանման կամ տարբեր իրավիճակներում կոնկրետ ինչո՞վ է պայմանավորված լինում մարդու գործունեությունը և վարքը: Հասկանալու համար, թե ինչն է նախորդում կոնկրետ գործողությանը, անհրաժեշտ է ամենից առաջ վերլուծել անձի պահանջմունքների և դրդապատճառների համակարգը, որոնք նրան մղում են ակտիվության: Խնդիրն այն է, որ հաճախ մնում է չպարզված, թե ինչո՞վ է պայմանավորված լինում դրդապատճառի ընտրությունը: Այս խնդիրն ունի երկու կողմ. 1. ինչո՞ւ մարդիկ որոշակի իրադրություններում վարվում են այսպես, այլ ոչ թե այլ կերպ, և 2. ինչո՞վ են նրանք ղեկավարվում, երբ ընտրում են հատկապես տվյալ գործելաոճը:

Ռուսական և խորհրդային դպրոցներ: Ռուս և խորհրդային մասնագետները առաջադրված խնդրի պարզաբանման համար կարևոր նշանակություն են տվել սոցիալական դիրքորոշմանը: Կ.Օբուխովսկու պնդմամբ, սոցիալական դիրքորոշման ազդեցությանը կարելի է հանդիպել մարդկանց նույնիսկ կենցաղային հարաբերություններում, երբ նրանք որոշում են գնալ, օրինակ, համերգ, այլ ոչ թե կրկես, ասելով՝ կրկեսը երեխաների համար է, կամ ասում են. «դժվար թե այդ մարդն ինձ դուր գա, որովհետև քաղաքագետ է, իսկ ես առհասարակ քաղաքագետներին չեմ սիրում» (1): Ակնհայտ է, որ կենցաղային մակարդակում «սոցիալական դիրքորոշումը» գրեթե համընկնում է «վերաբերմունքի» հետ, սակայն, հաշվի առնելով, որ հոգեբանության մեջ «վերաբերմունք» և «դիրքորոշում» հասկացություններն ունեն կոնկրետ ձևակերպումներ, ուստի «սոցիալական դիրքորոշումը» նույնպես հարկավոր է դիտարկել այդ տեսակետից և նրա համար գտնել կոնկրետ ձևակերպում: Ինչպես նշեցինք վերևում, Դ.Ն.Ուզնաձեի «դիրքորոշման» և «սոցիալական դիրքորոշման» միջև որոշակի կապ կա, սակայն այդ կապն ավելի շատ ձևական է, քան բովանդակային: Հետաքրքիր է, որ հիմնական հասկացությունների այն հավաքակազմը, որոնցով սահմանվում են այս երկու քննարկվող հասկացությունները, գրեթե նույնական են: Դրանք են պահանջմունքը, հակվածությունը, ուղղվածությունը, պատրաստականությունը: Զմոռանանք, որ «դիրքորոշումը» սահմանվում է որպես «անձի որոշակի ակտիվություն ցուցաբերելու պատրաստականության վիճակ՝ պայմանավորված պահանջմունքով և օբյեկտիվ իրադրությամբ»: Տվյալ իրադրությունում պահանջմունքի բավարարմանն ուղղված անձի նախատրամադրվածությունը կարող է ամրակայվել նրա հոգեկանում (սևեռված դիրքորոշում)՝ ի տարբերություն իրադրային դիրքորոշման, որն առաջ է գալիս անծանոթ իրադրությունում (իրադրային դիրքորոշում): Առաջին հայացքից կարող է թվալ, թե այստեղ մենք պարզունակ փորձ ենք կատարում ընդամենը բացատրել, թե ինչպիսի՞ն է մարդու գործունեության ուղղվածությունը որոշակի պայմաններում, սակայն հիմնախնդրի քիչ ավելի մանրազնին

[1] *Կ.Օբուխովսկի-ն հոգեբան, ով մարքսիստական տեսակետից վերլուծել է անձի մղումների հոգեբանական պատճառականությունը, դրդապատճառները և վարքի դրսևորումները, տես Обуховский К., Психология влечений человека. М., 1972, с.247.*

վերլուծությունը ցույց է տալիս, որ նման հարցադրումը չի կարող կիրառելի լինել սոցիալական հոգեբանության համար: «Դիրքորոշումը» որևէ կապ չունի մարդու վարքը պայմանավորող բազմաբնույթ սոցիալական գործոնների, սոցիալական փորձի յուրացման, սոցիալական իրադրության բնույթը որոշող պայմանների և այլ փոփոխականների վերլուծության հետ, իսկ «ուզնաձեական» դիրքորոշումը մեծամասամբ վերաբերում է մարդու պարզագույն, հիմնարար պահանջմունքների բավարարմանը: Ավելին՝ Դ.Ն.Ուզնաձեն դիրքորոշումը վերագրում է անգիտակցականին, ինչը բացառում է դրա մասնակցությունը մարդու գործունեության բարձրագույն ձևերին: Գ.Մ.Անդրեևան գրում է. «Այսպիսի մոտեցումը բնավ չի նսեմացնում Դ.Ն.Ուզնաձեի հետազոտությունների կարևորությունն ու նշանակությունը, չնայած նրա դպրոցի հետևորդների կողմից նախկինում ևս այդ գաղա-փարները զարգացնելու և սոցիալական հոգեբանության համար կիրառելի դարձնելու փորձեր են կատարվել, այլ անհրաժեշտ է հոգեբանական տարբեր մոտեցումների հետ համեմատելու և այդ հարցում սոցիալական հոգեբանության տեսակետը հստակեցնելու համար» (1):

Ի.Ն. Մյասիշչևը համեմատականներ է տարել «վերաբերմունքի» և «դիրքորոշման» միջև՝ «վերաբերմունքը» ներկայացնելով որպես մարդու կողմից ռեալ իրականության և նրա առանձին կողմերի հետ ձևավորված ժամանակավոր կապերի այնպիսի համակարգ, որը որոշում է մարդու հետագա վարքի ուղղվածությունը (2): Այս առումով վերաբերմունքի գործառույթների շրջանակը փաստորեն չի սահմանափակվում՝ ներառելով ամենաբարդ սոցիալ-հոգեբանական երևույթները: Արդյունքում «վերաբերմունքի» շրջանակներն ընդլայնվում են և այն կիրառելի դարձնում սոցիալական հոգեբանության համար:

Լ.Ի.Բոժովիչը (3) հաստատել է, որ մանկական հասակում անձի ձևավորման ժամանակ ուղղվածությունը ներկայանում է որպես ներքին դիրքորոշում՝ դեպի շրջակա սոցիալական միջավայրը, նրա առանձին օբյեկտները: Չնայած սոցիալական տարբեր իրադրությունների և օբյեկտների նկատմամբ ներքին դիրքորոշումները կարող են միանգամայն տարբեր լինել, սակայն նրանցում հնարավոր է առանձնացնել այնպիսի ընդհանուր միտում, որը գերակայող դիրք է գրավում և հնարավորություն է տալիս որոշակի հավանականությամբ կանխատեսել վարքը անծանոթ իրադրություններում: Անձի ուղղվածությունը կարելի է բնորոշել որպես տարբեր պայմաններում, ընդհուպ՝ մինչև ամենաբարդ սոցիալական իրադրություններում, օբյեկտների նկատմամբ որոշակի վարք ցուցաբերելու կողմնորոշվածություն: Անձի «ուղղվածության» այսպիսի մեկնաբանությունը հնարավորություն է տալիս այն դիտարկել «սոցիալական դիրքորոշման» հետ նույն հարթությունում:

Գ.Մ.Անդրեևան գտնում է, որ «սոցիալական դիրքորոշման» հասկացության հետ կարելի է կապակցել նաև Ա.Ն.Լեոնտևի գաղափարները՝

[1] *Андреева Г.М., Социальная психология, 2001,с. 11.*
[2] *Мясищев В.Н., Личность и неврозы. Л., 1960, с. 160.*
[3] *Божович Л.И., Личность и ее формирование в детском возрасте. М., 1969.*

«անձնային իմաստի» վերաբերյալ: Երբ անձի տեսության մեջ ընդգծվում է գործունեության արտաքին պայմանների վերաբերյալ օբյեկտիվ գիտելիքների կարևորությունը, ապա դրանով իսկ առաջ է գալիս ապագա վարքի հնարավոր դրսևորումների հարցը, պայմանավորված այն անձնային իմաստով, որը մարդու համար ձեռք է բերում գործունեության առարկան:

Վկայակոչելով Ա.Գ. Ասմոլովին և Մ.Ա.Կովալչուկին (1), Գ.Մ.Անդրեևան եզրակացնում է, որ սոցիալական դիրքորոշումն «այն անձնային իմաստն է, որը ծնվում է նպատակի և դրդապատճառի հարաբերությունից»: Խնդրի այսպիսի ըմբռնումը չի բացառում «սոցիալական դիրքորոշումը», ինչպես նաև «ուղղվածությունը» և «վերաբերմունքը» ընդհանուր հոգեբանության հասկացությունների համատեքստից, այլ, ընդհակառակը, դրանց համար հնարավորություն է ստեղծում գոյատևել «դիրքորոշման» հասկացության այն ձևակերպման հարևանությամբ, որը հեղինակել է Դ.Ն.Ուզնաձեն:

Արևմտյան դպրոցներ: Սոցիալական դիրքորոշումների խնդիրը ավանդաբար առաջադրվել և հետազոտվել է արևմտյան սոցիալական հոգեբանության և սոցիոլոգիայի կողմից: Սոցիալական դիրքորոշումների նշանակման համար արևմտյան դպրոցները կիրառել են «ատիտյուդ» (ֆրանսերեն՝ attitude-դիրք, տեղադրություն, իսկ հասկացության ներառված իմաստով՝ նաև աշխարհընկալում) հասկացությունը, ի տարբերություն «դիրքորոշման», որը բնորոշվել է որպես «set»: Պատմականորեն առանձնացվել է չորս հիմնական շրջան.

1) 1918թ. «attijwud» հասկացության ներդրումից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը: Այս փուլին բնորոշ է հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրության մեծ աճը: Այսպես, ամերիկյան հետազոտողներ Ու.Թոմասը և Ֆ. Զնանեցկին (2), ուսումնասիրելով բնակության համար Լեհաստանից ԱՄՆ տեղափոխված գյուղացիների հարմարման խնդիրները, ուշադրություն են դարձրել երկու փոփոխականների առկայության վրա, առանց որոնց հնարավոր չէր լինում նկարագրել գյուղացիների հարմարման գործընթացը նրա երկու կողմերով՝ անհատի կախվածությունը սոցիալական միջավայրից և սոցիալական միջավայրի կախվածությունն անհատից: Առաջին հայացքից նկատելի է, որ այս փոփոխականները որոշակիորեն տարբեր են, քան նախկինում բավականաչափ ուսումնասիրված՝ անհատի և միջավայրի փոխազդեցության երկու կողմերը: Հետազոտողներն առաջարկեցին սոցիալական միջավայրի բնութագրման համար օգտագործել «սոցիալական արժեք» և անհատի համար՝ «սոցիալական դիրք» (ատիտյուդ) հասկացությունները: Վերջինս սոցիալական հոգեբանության մեջ առաջին անգամ բնորոշվեց որպես «անհատի կողմից սոցիալական օբյեկտի արժեքի,

---

[1] *Асмолов А.Г. Ковальчук М.А., О соотношении понятия установки в общей и социальной психологии // Теоретические и методологические проблемы социальной психологии, М., 1977.*

[2] *Արևմտյան դպրոցի հետագա վերլուծությունը հոդվածում կատարված է ըստ Андреева Г.М., Социальная психология, 2001.*

կարևորության, իմաստի հոգեբանական վերապրում», կամ որպես «որոշակի սոցիալական արժեքին վերաբերող անհատի գիտակցության վիճակ»: «Ատիտյուդի» հասկացության ներմուծումը յուրօրինակ պայթյուն առաջացրեց հետազոտական դաշտում: Ի հայտ եկան նորահայտ հասկացության մի քանի իրարամերժ մեկնաբանություններ: 1935թ. Գ.Օլպորտը առաջարկեց տվյալ հասկացությունը բնորոշել թվով 17 բաղադրիչներով, որոնցից առանձնացրեց հետազոտողների մեծամասնության կողմից ընդունելի չորս հիմնականները: Վերջնական տարբերակով ատիտյուդն ընկալվում էր որպես.

ա. գիտակցության և նյարդային համակարգի որոշակի վիճակ,

բ. որն արտահայտում է հակազդմանը պատրաստ լինելը,

գ. ունի որոշակի կազմակերպվածություն,

դ. հիմնված է նախկին փորձի վրա,

ե. վարքի վրա ունի ուղղորդող և դինամիկ ազդեցություն:

Նպատակային հետազոտությունները շարունակվում էին:

2) 40-50-ական թվականներ, որին բնորոշ էր հետաքրքրության և հետազոտությունների քանակի զգալի անկումը՝ որոշակի դժվարությունների և փակուղային իրավիճակների առաջացման պատճառով:

Սոցիալական դիրքորոշման մասնատումը բաղադրամասերի անհասկանալի էր դարձնում, թե որևէ կոնկրետ բաղադրիչի չափումն արդյոք պատկերացում տալի՞ս է ամբողջական սոցիալական դիրքորոշման մասին, թե՞ հնարավոր է հետազոտել բացառապես տվյալ բաղադրիչը: Բացի այդ, եթե բացահայտվել է սոցիալական դիրքորոշումը որևէ օբյեկտի նկատմամբ, ապա ի՞նչ տեղի կունենա, եթե այդ օբյեկտը ներառվի և դիտարկվի ավելի բարդ սոցիալական համակարգի մեջ: Հարցերն էլ ավելի բարդացան, երբ հետազոտողները տեղեկացան Լ.Լապյերի գիտափորձի արդյունքների մասին (1934թ.): Հետազոտողն իր երկու չինացի ուղեկիցների հետ շրջագայում էր ԱՄՆ-ում՝ գիշերելով թվով 252 հյուրանոցներում: Բոլոր հյուրանոցներում, բացի մեկից, նրանք արժանացան բարեկիրթ ընդունելության: Շրջագայությունն ավարտելուց հետո Լ.Լապյերը նամակով դիմեց նույն 251 հյուրանոցներին (բացի «անբարեկիրթ» հյուրանոցից)՝ ևս մեկ անգամ նույն խմբով այցելելու խնդրանքով: Մեծ էր զարմանքը, երբ պատասխան ստացվեց ընդամենը 128 հյուրանոցներից, ընդ որում, միայն մեկ հյուրանոց էր պատրաստակամություն հայտնում հյուրերին կրկին ընդունելու, 52 տոկոսը մերժողական պատասխան էին տալիս, մյուսները՝ խուսափողական: Լ.Լապյերն այս տվյալները մեկնաբանեց այսպես. սոցիալական դիրքորոշման (հյուրանոցների ղեկավարության վերաբերմունքը ազգությամբ չինացի մարդկանց նկատմամբ) և մարդկանց կոնկրետ վարքի միջև կա իրական տարբերություն: Ստացված պատասխանները վկայում էին չինացիների նկատմամբ հյուրանոցների ղեկավարության բացասական դիրքորոշման առկայության մասին, իսկ նրանց իրական վարքը, ընդհակառակը, ենթադրում էր դրական դիրքորոշում: Այս եզրակացությունն ստացավ «Լապյերի պարադոքս» անվանումը և հիմք հանդիսացավ համատարած

հոռետեսության. եթե իրական վարքը չի հենվելու սոցիալական դիրքորոշման վրա, ապա էլ ի՞նչ իմաստ ունի վերջինիս հետագա հետազոտումը:

3) 50-60-ական թվականներ, որին բնորոշ էր հետաքրքրության վերածնունդը, նոր գաղափարների առաջադրումը, սակայն, միաժամանակ, ընդունվում էր ճգնաժամային իրավիճակի առկայությունը:

Զանազան միջոցներ ձեռնարկվեցին առաջ եկած դժվարությունները և բարդությունները հաղթահարելու համար: Մասնավորապես, Մ.Ռոկիչը միտք հղացավ պնդելու, որ մարդն ունենում է երկու սոցիալական դիրք (ատիտյուդ)՝ 1.դեպի օբյեկտը և 2.դեպի իրադրությունը: Տարբեր իրադրություններում գործարկվել կարող է մեկ այս, մեկ այն ատիտյուդը: Ըստ նրա, Լ.Լապյերի գիտափորձում չինացիների նկատմամբ ատիտյուդը եղել է բացասական, սակայն գերակշռել է իրադրային ատիտյուդը: Հյուրանոցի տերը տվյալ իրավիճակում գործել է սպասարկման ոլորտի համընդհանուր ճանաչված նորմերի համաձայն:

Դ.Կացը և Է.Ստոթլենդը ենթադրեցին, որ տարբեր իրադրություններում կարող են ակտիվանալ ատիտյուդի կամ ճանաչողական, կամ աֆեկտիվ բաղադրիչները, և ըստ այդմ, արդյունքները կլինեն տարբեր: Լ.Լապյերի գիտափորձի արդյունքները այլ հետազոտողներ փորձում էին մեկնաբանել իրենց տեսանկյունից: Մասնավորապես, Մ.Ֆիշբայնը պնդում էր, որ անհրաժեշտ է կապակցել ոչ թե սոցիալական դիրքորոշումը վարքի հետ, այլ նրա առանձին բաղադրիչները:

4) 70-ական թվականներ, ակնհայտ լճացում՝ կապված հակասական և անհամատեղելի փաստերի առատության հետ (1):

70-ական թվականներին սոցիալական դիրքորոշումների վերաբերյալ ավարտուն պատկերացումներ այդպես էլ հնարավոր չեղավ ստեղծել: Չհաջողվեց հաղթահարել հետևյալ դժվարությունը. բոլոր հետազոտությունները շարունակում էին կատարվել լաբորատոր պայմաններում, որոշակիորեն կտրված լինելով իրական սոցիալական համատեքստից, ինչը նվազեցնում էր դրանց արդյունավետությունը: Եթե նույնիսկ փորձում էին հետազոտությունները «հրապարակ դուրս բերել», միևնույն է, դրանց մեթոդաբանությունը և գործիքակազմը չէր բավականացնում համապարփակ եզրակացություններ կատարելու համար:

Սոցիալական դիրքորոշումների ընդհանուր տեսակետ մշակելու ճանապարհին աղավաղվում, տուժում է նրա միասնական բնույթը: Այս կարևորագույն խնդրի լուծման համար 1975թ. նոր տեսակետ առաջադրեց Վ.Ա.Յադովը (2): Նրա հիմնական գաղափարն այն էր, որ անձին բնորոշ են նախահակվածության, նախատրամադրվածության բարդ նորագոյացություններ, որոնք որոշում են նրա վարքը և գործունեության ոճը: Այս նորագոյացություններն ունեն անստիճանաբաշխական (հիերարխիկ) դասավորվածություն, այսինքն, կարելի է առանձնացնել նրանց

---

[1] *Տես՝ Шихирев П.Н., Современная социальная психология США, М., 1979, с. 87-89.*

[2] *Ядов В.А., О диспозиционной регуляции социального поведения личности // Методологические проблемы социальной психологии. М., 197, с. 89.*

համեմատաբար ցածր կամ բարձր աստիճանները: Հետազոտողի այսպիսի դիրքորոշումը համապատասխանում էր Դ.Ն.Ուզնաձեի մշակած այն սխեմայի հետ, որ «դիրքորոշումն առաջ է գալիս բոլոր այն դեպքերում, երբ առկա է պահանջմունքը՝ մի կողմից և դրա բավարարման հնարավորության իրավիճակը՝ մյուս կողմից»: Վ.Ա.Յադովը փորձ կատարեց ըստ կարևորության աստիճանակարգել ինչպես անձի պահանջմունքների համակարգը, այնպես էլ իրադրություններն՝ ըստ բարդության: Նա հիրաշալի հասկանում էր, որ մինչ այդ արդեն մշակվել են մարդու էական պահանջմունքների դասակարգման բազմաթիվ տարբերակներ, որոնք, սակայն, միշտ մնացել են թերի: Հետազոտողը գնաց այլ ճանապարհով: Նա դասակարգման համար հիմք ընդունեց միայն մեկ չափորոշիչ՝ անձի սոցիալական շփումների շրջանակը: Շփումների առաջին օղակը, ըստ նրա, ընտանիքն է, հաջորդը՝ կոնտակտային փոքր խումբը, որի շրջանակներում անմիջականորեն գործունեություն է իրականացնում անհատը, այնուհետև առաջ է գալիս երրորդ՝ աշխատանքային, կենցաղային, հանգստի գործունեության շրջանակը և, վերջապես, այն ամենալայն շրջանակը, որն անհատի կողմից ընկալվում է որպես հանրային կառույց, որին ներգրավվում է անհատը, երբ յուրացնում է հասարակության գաղափարական-մշակութային արժեքները: Այնուհետև, պահանջմունքների սանդղակին համապատասխան, կառուցվում է այն իրադրությունների սանդղակը, որում կարող է գործունեություն ծավալել անհատը: Դրանք դասակարգվում են ըստ տևողության: Ամենացածրում կարճատև և արագ փոփոխվող առարկայական իրադրություններն են, երկրորդ տեղում են այն իրադրությունները, որոնք բնորոշ են փոքր խմբին, երրորդում՝ մասնագիտական, աշխատանքային, կենցաղային ու հանգստի գործունեությանը բնորոշ իրադրությունները և վերջապես՝ տվյալ հանրույթին բնորոշ ավելի տևական, կայուն հարաբերությունները, որոնք իրականացվում են տնտեսական, քաղաքական, գաղափարական ոլորտներում:Մնում է անհատի սոցիալական դիրքորոշումները վերագրել թվարկված չորս մակարդակներից որևէ մեկին:

ա. առաջին մակարդակում պարզագույն ամրակայված, սևեռված դիրքորոշումներն են, որոնք առաջ են գալիս պարզ իրադրություններում՝ կենսական պահանջմունքների ակտիվացման դեպքում,

բ. երկրորդ մակարդակը (համընկնում է ատիտյուդի հետ), շփման պահանջմունքի հիման վրա, ձևավորվում է փոքր խմբում իրականացվող անձնային շփումների ժամանակ: Այս մակարդակն ունի ավելի բարդ կառուցվածք, քան առաջին մակարդակը և ներառում է սոցիալական դիրքորոշման ճանաչողական, հուզական և վարքային բաղադրիչները,

գ. երրորդ մակարդակն ամրակայում է անձի որոշակի սոցիալական ակտիվությունը դեպի մասնագիտական, աշխատանքային գործունեությունը, հանգստի ու կենցաղի կազմակերպումը,

դ. չորրորդ՝ ամենաբարձր մակարդակը ձևավորում է անձի սոցիալական արժեքների համակարգը, որը ներառում է նրա աշխարհայացքը, բարձրագույն նպատակներն ու իդեալները:

Սոցիալական դիրքորոշումների այսպիսի քառաստիճան կառուցվածքը ծառայում է որպես անձի սոցիալական վարքի կարգավորիչ: Առաջին մակարդակում կարգավորվում են անհատի ամենապարզ, առարկայական գործողությունների ակտերը: Երկրորդ մակարդակում՝ սովորական, առօրյա պայմաններում իրականացվող արարքները, երրորդում՝ գործողությունների որոշակի համակարգը և վարքի ուղղվածությունն ու ոճը, այսինքն այն, ինչն անվանում են վարքագիծ և չորրորդում կարգավորվում է վարքագծի ամբողջականությունը, փաստացի ողջ գործունեությունը: Յուրաքանչյուր մակարդակին համապատասխան փոփոխվում են նաև անձի սոցիալական դիրքորոշումների կառուցվածքային երեք՝ ճանաչողական, հուզական և վարքային բաղադրիչների գործառույթները: Ավելի ցածր մակարդակներում, երբ անհրաժեշտ է գործել սոցիալական կոնկրետ օբյեկտների նկատմամբ, առավել կարևոր դերակատարություն է ունենում հուզական բաղադրիչը: Սակայն, երբ անհրաժեշտ է լինում որոշակի վերաբերմունք հանդես բերել սոցիալական այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են աշխարհայացքը, բարձրագույն նպատակները, քաղաքական հայացքները, ապա ակնհայտ է դառնում, որ առաջնային է ճանաչողական բաղադրիչը:

Սոցիալական դիրքորոշումների այսպիսի ըմբռնումը հնարավորություն է տալիս նորովի մեկնաբանել Լ.Լամյերի գիտափորձի արդյունքները: Լ.Լամյերի գիտափորձում խնդիրը միայն այն չէ, որ հյուրանոցատիրոջ նախապես հայտարարած վերաբերմունքի և իրական վարքի միջև եղած տարբերությունը կարող է հետևանք լինել վարքի կարգավորման գործում «դեպի օբյեկտը» կամ «դեպի իրադրությունը» նրա ունեցած կանխակալ վերաբերմունքի մասնակցության տարբեր աստիճանների կամ հյուրանոցի տիրոջ սոցիալական դիրքորոշման կառուցվածքի միևնույն մակարդակում ճանաչողական և հուզական բաղադրիչների տարբեր դերակատարության, այլ, հավանաբար, առկա են ավելի խորքային երևույթներ: Լ.Լապյերի՝ հյուրընկալություն հայցող նամակին հյուրանոցատիրոջ տված բացասական պատասխանը պայմանավորված է եղել նրա մոտ առհասարակ ոչ ամերիկացիների վերաբերյալ ձևավորված կանխակալ բացասական վերաբերմունքով, ինչի հետևանքով նա տվել է այդպիսի պատասխան, իսկ կոնկրետ այցելության դեպքում գործարկվել է կանխակալ վերաբերմունքի ավելի պարզ մակարդակը, որը կարգավորում է անձի սովորական, տարրական արարքների համակարգը:

Այսպիսով, պատմականորեն հստակեցվել են դիրքորոշում (установка) և սոցիալական դիրքորոշում (социальная установка) հասկացությունների հայերեն համարժեքները՝ ի տարբերություն դիսպոզիցիայի և ատիտյուդի:

Сравнительный анализ установки и социалньной
установки в контексте исторического развития

В. Ярамишян

Резюме

В психологии, в частности в социальной психологии, одной из важнейших проблем является соотношение психологических понятий установки, аттитюда, диспозиции, социальной установки. В данной статье в историческом аспекте рассмотрены этапы формирования и развития этой проблемы. Сделан вывод о необходимости уточнения понятий диспозиции и аттитюда в армяноязычной литературе.

Comparative Analysis of Attitudes and Social
Attitudes in the Context of the Historical Development

V.Yaramishyan

Summary

One of the most important problems in psychology, particularly in social psychology, is the relationship between psychological concepts of instructions and social attitudes. The article examines the stages of forming and elaborating of this problem in the context of historical development.

It is considered necessary to define more precisely the concepts of inclination and attitude in Armenian literature.